


N1(6)

С
Р
У
С
У

ХИГИЕНИЗМ



АПТЕКА-ФАРМАЦЕВТИЧЕСКАЯ

1933

1-1 APM.
3-5150 $\frac{1}{2}$

491.99 - 2
NL-25

'18 MAY 2010

Պրակտիկաներ բայց յերկրութեաի, միացե ք

3-5150/₁^a

804

ՈՒՍՏԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ

ՃՈՒՐՆԱԼ-ԴԱՍՎԳԻՐՔ

ՀՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ I ԱՅՏ.

ԴՐԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԽՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. ԿՈՎԿԱՍԻ ՑԵՐԿՎ-
ԼՈՒՄԲԱԺՆԻ ՑԵՎ «ՀՅՈՒՍԽ. ԿՈՎԿԱՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԻ

Г.П.Б. в Лнгр.
Ц. 1933 г.
Акт № 263

Инв. № 21387

Nº 1- (6)



ՀՐԱՏԱՐԱԿՅԱՆՔՈՒԹՅՈՒՆ «ԶՅՈՒՆԱՎԱՐԻ ԿՈՎԿԱՍ»
1933 թ. ՈՂՈՏԾՈՒՅՈՒՆ

Հ 6 AUG 2013 ՀԱՐՎԱԾԱՑԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ
ՊԻՌՆԵՐՆԵՐ ՅԵՎ ԱԶԱԿԵՐՏՆԵՐ

«Ուսման Հարվածային»-ը ձեր ժուրնալ՝ դասապիլքն եւ Դուք կարդացել եք նրա առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ և հինգերորդ համարները, վորոնք հաստարակվել են 1932 թվին:

Դուք անշուշտ շատ բան տովորել եք նրանից:

Շատ նորություններ իմացել:

Շատ ղեպքերում զոհ եք յեղել նրանից:

Մի շարք ղեպքերում ել չեք հասկացել ու դժգոհել եք:

Սակայն մեզ զոշինչ չեք ասել ձեր տպավորությունների մասին:

Վոչ մի նամակ չեք ուղարկել:

Վոչ մի նամակ չեք զրել ձեր դասարանի, դպրոցի, վաշտի աշխատանքների մասին:

Ինչու, հասցե՞ն չեք իմացել:

Ամեն մի համարի մեջ մեր հասցեն տպված կա:

Զգիտե՞ք ինչպես զրել Հարցրեք ուսուցչին, խորհուրդ արեք միասին:

Վախենում եք սխախե՞ր անեք:

Իզուր: Մենք կարող ենք կարգավ ուղղել Ձե՞ր վոր միանգամից ամեն ինչ լավ կատարելն անհնար եւ:

Դուք դաս եք առնում, կարգում եք, գրում, աշխատանքի սեսյակում, արհեստանոցում աշխատում եք, դանի նյութերից յեխելով գպրոցի հողամասն եք մշակում, պատի թերթ հաստարակում, խաղում եք, զվարճանում, պատահում ե անկարգություն եք անում: Դուք ուսմա և վորակը բարձրացնելու համար մրցում եք իրար հետ, մեկմեկու գնում և այլն և այլն:

Բոլորը հիշել ղժվար եւ հայտնի բան եւ, ամբողջ որը զրադաշեք:

Այդ բոլորի մասին պիտի զրեք «Ուսման Հարվածային»-ին:

Լավ որինակները բոլորը պիտի իմանան և ոգտագործեն. թերությունների մասին պիտի իմանան ուրիշ դպրոցների աշակերտներն են վոր ուսման գործն ավելի լավացնեն:

Դուք գրում եք փոքրիկ պատմվածքներ, բանաստեղծություններ, տեխնիկական ու գյուղատնտեսական զանազան սրամիտ բաներ եք շինում, անում: Ճե՞տ եւ:

Այս բոլորի համար «Ուսման Հարվածային»-ը հատուկ բաժին է ունենալու, ուր ձեր թղթակցությունները, պատմվածքներն ու սրամությունները կտպվեն:


Գրեցեք, ի՞նչ եք ուղում, վոր «Ուսման Հարվածային»-ն ունենա իք եջերում:

«Ուսման Հարվածային»-ը ձերն եւ:

Կապ ունեցեք նրա հետ, մասնակցեցեք նրա աշխատանքներին:

ԽՄԱԱ.Գ.ՐՈՒԹՅՈՒՆ

406/2-67



ԽԵՆԻՆ

Ու այսոր կը կին
Աշխարհում բոլոր
Հիշում են մահը¹
Մեծ առաջնորդի:

Նրա կորուստն
Ու մահը դաժան
Զի ընկճում թափը,
Կառուցող բազկի:

Ամեն մի զարկում
Ու քայլում հատու,
Ապրում ե հզոր
Պատգամը նրա:

Այս մեր վերելքի
Կառուցման մարտում
Անմահ ե, հատու
Վեհ կամքը նրա:

Չեն սպոմ այսոր
Մրտերը հպարտ,
Չորս դին հաղթական
Թվերն են խոսում:

Այս վեհ պայքարում
Քայլում են հպարտ,
Լենինյան ճամբով
Անշեղ աննահանջ:

ՄԵԾ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

1924 թվի հունվարի 21-ին վախճանվեց բանվոր դաստիարգի մեծ առաջնորդ, աշխարհի բոլոր ճնշվածների սիրելի ուսուցիչ և բարեկամ՝ Լենինը:

Լենինը «բարձրագույն տիպի ղեկավար ե, լեռան արծիվ ե, վոր չգիտե ինչ ե վախը պայքարում...»: Այսպես ե գնահատում Լենինին մեր առաջնորդ ընկ. Ստալինը:

Լենինն իր ամբողջ կյանքը նվիրեց բանվոր դասակարգի հեղափոխական կովին: Նա վոտքի հանեց շահագործվողներին, ճնշվածներին՝ կապիտալիստների, կալվածատերերի, կուլակների դեմ: Նա պրոլետարիատին կազմակերպեց կոմունիստական կուսակցության մեջ՝ կապիտալիզմի դեմ պայքարելու համար: Նա կոչ արեց բոլոր աշխատավորներին գնալ պրոլետարիատի յետևից:

Լենինն ամենից լավ և խոր ըմբռնեց, թէ ինչպես և ինչ ճանապարհով կարելի յե և պետք ե աղատագրել բանվորներին, բոլոր հարստահարվածներին կապիտալիստների շահագործումից:

Նա ամենայն խորությամբ ցույց տվեց, վոր միջիայն հեղափոխության միջոցով կարելի յե վոչնչացնել շահագործումը:

Անողոք կոիվ մղելով մենշեկների, ծրոցկու և բանվոր դասակարգի բոլոր դավաճանների դեմ, Լենինը հաստատեց, վոր առանց բանվորներին կազմակերպելու, առանց կոմունիստական կուսակցության, առանց աշխատավոր գյուղացիության՝ պրոլե-

տարիատի յետևից տանելու, մենք չենք կարող կապիտալիստներին ու կալվածատերերին հաղթել:

Առանց դրան մենք չենք կարող մեր յերկրում սոցիալիզմ կառուցել:

Լենինն ամենամեծ հեղափոխական դործիչն եր, մեծ առաջնորդը և ուսուցիչը:

Նա կազմակերպեց կոմունիստական կուսակցությունը: Լենինը և նրա ձեռքով դաստիարակված հազարավոր հեղափոխական բոլշևիկները չեյին սարսափում ցարիզմի անխիղճ հաղածնքներից, կախաղաններից, նրանք չեյին վախենում Միքրիի դաժան աքսորից, հյուսիսի սառնամանիքից: Նրանք չեյին սուկում ցարական դահճաներից:

Նրանք Լենինի ղեկավարությամբ տոկուն պայքար եյին մղում ցարիզմի, բուրժուազիայի ծանր լծի դեմ: Դժվարությունները չեյին հուսալքում լենինին: Լենինը հաղթահարում եր ամենածանր դժվարությունները:

Հոկտեմբերյան հաղթանակից հետո, Լենինն իր կյանքը նվիրեց Ռուսաստանում պրոլետարական դիկտատուրան ամրապնդելու և սոցիալիզմի կառուցման և ամբողջ աշխարհի պրոլետարիատի ազատազրման գործին:

Նա ասում եր, վոր Ռուսաստանի պրոլետարիատը պետք ե հաջողությամբ կառուցի մեր յերկրում սոցիալիզմ, վորպեսզի աշխարհի բոլոր բանվորները սովորեն մեզանից և մեր ճանապարհով վոչնչացնեն շահագործումը, և ստեղծեն սոցիալիզմ:

Մենշեվիկները, հականեղափոխական արոցկիստները դեմ եյին գնում լենինին և կուսակցության ուղիղ գծին: Նրանք ասում եյին, թէ հեղափոխություն չպետք ե կատարել, թէ բանվորներն աշխատավոր գյուղացիության հետ միասին չեն կարող մեր յերկրում սոցիալիզմ կառուցել Փաստորեն նրանք պաշտպանում եյին բուրժուազիայի շահերը:

Իսկ Լենինը հաստատ կամք ուներ, հսկայական վճռականություն ուներ: Նա նախատեսնելով բոլոր դժվարությունները և անողոք կոիվ մղելով բոլոր թշնամիների դեմ պատվիրեց:

«Առաջին գործն ե չտարվել հաղթանակով և չամբարտավանալ. յերկրորդ գործը՝ ամբացնել ձեռք բերած հաղթանակը. յերրորդը՝ մինչեւ վերջը ջախջախել հակառակորդին, վորովիստեն նա ջախջախած ե, բայց դեռ մինչեւ վերջը չի վոչնչացրած»:

1917 թվից մինչեւ հիմա ԽՍՀՄ-ի աշխատավորությունը կոմունիստական կուսակցության դեկավարությամբ հաստատ քայլերով գնացել է և գնում ե դեպի սոցիալիզմ:

Կառուցվել ե սոցիալիզմի հիմքը. գյուղը 60 տոկոս կոլեկտիվացման և յենթարկվել լենինի դրոշի տակ, նրա պատվերները կատարելով մենք պայքարում ենք կուլակների, մեր թշնամիների դեմ, վորպեսզի մեր յերկրում կառուցենք սոցիալիզմ։

1924 թվին մեզնից ընդմիշտ բաժանվեց մեր թանկագին ուսուցիչ լենինը։

Ծանր եր այդ կորուստը։ Զկա մի ազնիվ աշխատավոր, փոր չգգա այդ մեծ մարդու, ազնիվ հեղափոխականի կորուստը։



Լենինի անունը, կյանքը, գործը, նույնիսկ մահը սարսափեց յերկրագնդի բոլոր շահագործողներին, կապիտալիստներին, կալվածատերերին, թագավորներին, կուլակներին։

Լենինը մեծ հեղափոխական ժառանգություն թողեց, վորով հպարտանում և վոգերվում ե շահագործվող մարդկությունը։

Նա թողեց իր մահից հետո կոմունիստական կուսակցությունը, խորհրդային իշխանությունը, կոմյերիամիությունը նա թողեց սկսված սոցիալիստական շինարարությունը, լենինը մեզ թողեց իր ուսմունքը։

Լենինը պատվիրեց պրոլետարիատին և նրա ավանդարդ կոմունիստական կուսակցությանը հաղթահարել բոլոր դժվարությունները և կառուցել մեր յերկրում սոցիալիզմ։

Նա պատվիրեց ամրացնել բանվորների և աշխատավոր գյուղացիության միությունը և մինչև վերջ կովել կուլակների

դեմ, լենինը պատվիրեց զարգացնել մեր տնտեսությունը, բարձրացնել աշխատավորների կուլտուրական մակարդակը, վերացնել անդրադիտությունը, պայքարել կրոնի դեմ։

Նա պատվիրեց աշխարհիս բոլոր հեղափոխականներին համախմբվել կոմունիստական կուսակցության շուրջը և միացյալ ուժերով վոչչացնել ամեն տեսակի շահագործումը։

Լենինը պատվիրեց մեզ բոլոր յերեխաններին դաստիարակել կոմունիստական կուսակցության շուրջը և միացյալ ուժերով վոչչացնել ամեն տեսակի շահագործումը։



9 տարի առանց լենինի մենք առաջ ենք տանում սոցիալիստական շինարարությունը Վոչչի քայլ շենք շեղվում և չպետք ե շեղվենք լենինի գծած ճիշտ ուղուց։

Լենինը կենդանի յե. ջանի պես վառվում ե միլիոնավոր շահագործվողների սրտում, Ապրում, աճում և հաղթանակում ե լենինի գործը։

Այսոր բոլոր յերկըների պրոլետարիատը և ամբողջ աշխարհի աշխատավորությունը մեծ հաղթանակներով ե գալիս խոնարհվելու մեծ զիտնականի և հեղափոխության առաջնորդի շիրմի առաջ և նոր յեռանդով ու թափով շարունակում ե հեղափոխության գործը։

Լենինի գործը հիմքից ցնցեց կապիտալիզմը. նրա անունը մահ ե շահագործողների համար։ Նա իր վողջ կյանքը նվիրեց բանվոր դասակարգի ազատազրման գործին։

Մենք ել լենինի պես, լենինի ճանապարհով մեր կյանքը կտանք բանվոր դասակարգի ազատազրման և սոցիալիզմի կառուցման մեծ գործին։



ԱԹԱՆՑ ԼԵՆԻՆԻ - ԼԵՆԻՆԻ ՀՄՈՎ

Առանց Լենինի, մենք այսոր հզոր,
Դնում ենք նրա ուղիյով բոսոր
Նրա ուսմունքով ու գաղափարով
Նոր կյանք ենք կերտում նորավառ սիրով:

Առանց Լենինի, բայց լենինիզմով
Բյուր տիտաններ ենք կառուցում խոշոր
Բոլշևիկական աննահանջմափով
Առաջ ենք քայլում նոր կյանքի ճամբով:

Լենինյան բոսոր ալ դրոշի տակ
Բազուկով ջուտ ու կամքով արի
Ներտում ենք նոր կյանք սոցիալիստական
Աւր մարդը մարդուն ել դայլ չի լինի:

ԿԱՐԼ ԼԻԲԿՆԵԼԻՍ ՅԵՎ ՌՈԶԱ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ

Դերմանական պրոլետարիատի առաջնորդներ՝ Կարլ Լիբկնելիսը և Ռոզա Լյուքսեմբուրգը տամայակ տարիներ շարունակ պայքարել են բուրժուազիայի և նրա բոլոր կուսակցությունների դեմ:

Կարլ Լիբկնելիսը և Ռոզա Լյուքսեմբուրգը կազմակերպում ելին գանգամ բանվորական միություններ և նրանց մեջ ընդգրկում բանվորության ամենահեղափոխական մասը:

Բոլոր յերկրների բանվորները, յերիտասարդները գիտելին նրանց անունը: Լիբկնելիսը յերիտասարդության կազմակերպիչը և առաջնորդն եր. նրան շատ ելին սիրում և հարգում: Լիբ-



Կարլ Լիբկնելիս



Ռոզա Լյուքսեմբուրգ

Կնեխտը կազմակերպել եր «Սպարտակ» յերիտասարդական միությունը, վորին մամնակցում ելին բանվոր հեղափոխական յերիտասարդները:

Կարլ Լիբկնելիսը և Ռոզա Լյուքսեմբուրգն այն քչերից ելին, վորոնք հասկանալով 1914 թ. համաշխարհային պատերազմի բնույթը, գիտակցելով, վոր այդ պատերազմը հանդիսանալու յե աշխատավորության արյան բաղանիք և բանվորությունը զոհվելու յե բուրժուազիայի համար՝ պայքարեցին պատերազմի դեմ: Նրանք պայքարում ելին Լենինի հետ միասին:

Լենինը նրանց շատ եր սիրում, վորովհետեւ նրանք լավ հեղափոխականներ եյին:

1918 թ. նոյեմբերին, Գերմանիայի մի շարք քաղաքներում բռնկվում է հեղափոխություն, կազմակերպվում են խորհուրդներ:

Լիբենեխտը և Լյուքսեմբուրգը գտնվում եյին պրոլետարական հեղափոխության համար, կովող մարտիկների ղեկավար դիրքերում: Բուրժուազիան հեղափոխության դեմ կորվ եր կազմակերպում և ցանկանում եր ճաշել հեղափոխությունը:

Կարլ Լիբենեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը ձերբակալվում են և նետվում բանտ. Նրանց շատ են շարչարում: Բուրժուատներն ու նրանց սպաները, կատաղած նրանց հեղափոխական գործունեությունից, վորոշում են սպանել նրանց: Բայց, վախենալով բանվորներից, վորոշում են ծածուկ կատարել իրենց զասակարգային վրիժառությունը: Նրանք կառքով փախցնում են Լիբենեխտին ու Ռոզա Լյուքսեմբուրգին և 1919 թ. հունվարի 15-ին գազանարար սպանում:

Նրանք ընկան հեղափոխության մարտական դիրքերում: Հեղափոխությունը շարունակվեց: Յերկարագույն մեկ վեցերորդ մասում բռնկվեց պրոլետարական հեղափոխություն և հաստատվեց խորհուրդների իշխանությունը:

Բուրժուազիան կարծում եր, թե դրանց սպանելով կվերջանա գերմանական հեղափոխությունը Բայց, ընդհակառակը, կոմունիստական շարժումը Գերմանիայում աճում է: Գերմանիայի հեղափոխական բանվորությունը և բանվոր յերիտասարդությունը ուժեղ պայքար են մղում բուրժուազիայի դեմ ու պայքարում են Գերմանիան խորհրդային դարձնելու համար:

Նոր սերունդը, հարգելով հեղափոխության դիրքերում ընկած մարտիկներին, բարձր կպահի համաշխարհային պրոլետարական հեղափոխության դրոշը և կպայքարի այդ հեղափոխության համար:

ՀՈՒՆՎԱՐԻ Զ-Ը

1905 թիվն եր, հունվարի 9-ը:

Զյան փաթիները թափվելով իրար վրա, մեծ ու փոքր բլբակներ եյին կազմում: Ցրտաշանչ բուքը ծեծելով լուսամուտների փեղկերը, վունալով առաջ եր սլանում:

Մարիաննան, պինդ գրկած յոթ տարեկան վալորյային, գնում եր բանվորական հոծ մասսաների հետեւից, վորոնք ճեղքելով ձյան հաստ շերտերը, առաջ եյին շարժվում Պետրոգրադի (Ներկայիս Լենինգրադի) լայն փողոցներով: Նրանք գնում եյին դեպի ձմեռային պալատը «բարերար» թագավորից ոգություն խնդրելու:


Գապոն քահանան կեղծ խոստումներով ուղեկցում եր մասսաներին և «միխիթարական» աղօթքներ կարգում:

— Այս, այս, «բարերար» թագավորը ձեր կողմն է, նա չի մերժի իր ժողովրդի խնդիրը:

— Այս, մենք գնում ենք մեր տիրոջ մոտ — ձայնում եյին մյուսները:

— Հացի համար, մեր յերեխաները քաղցից կոտորվում են...

Յեվ այդպիս ձայներն իրար խառնվելով թնդում եյին սառն ողում դողովն ձեռքերը, Գապոնի խոստումներից ել ավելի:



Թագավորը՝ պատաժանեց կրակով ու արթիենվ

Ի ուժ առնելով, վեր եյին բարձրացնում խաչ ու խաչվառները և առաջ եյին շարժվում համոզմունքի և կարիքի դրոշմբերին:

Դեռ ձմեռային պալատին չհասած, ամբոխը մի ակնթարթում կանգ առաջ: Պալատի շուրջ կանգնած զինվորական խիտ շարքերը բանվորների մեջ յերկյուղ և շփոթմունք առաջ բերին:

Բանվորները գարմացած հարց տվին իրար.
—Բա ինչո՞ւ համար են այս զինվորները...

Յեվ նորից փորձեցին առաջ շարժվել...

Ցուրտը գնալով ավելի և ավելի յեր սաստկանում։ Վալող-
յան փայտացած թաթիկներով ծեծում եր մոր փոսկրացած
կուրծքը և հաց ուզում։ Մարիաննան հազիվ շարժելով կապ-
տած շրթունքները, հանգստացնում եր փորդուն և խուռն բազ-
մության միջից ցույց եր տալիս ձմեռային պալատի պատերը։

—Տես տես, այ հիմա, հիմա այսուեղից մեղ հաց կտան. ապա..

Մարիաննան խոսքը չեր վերջացրել, յերբ գնդակների խլա-
ցուչիչ ձայներից ամբոխն իրար խառնվեց։

Սուր գնդակը ծակեց Վալոդյայի կուրծքը, վորի մանկա-
կան շուրթը վերջին անգամ արտասանեցին—հաց...

Մարիաննայի նման իրենց մանկիկներին կրծքին սեղմած
շատերն ընկան այդ որը։

Նրանց ալ արյունը ներկեց փողոցների ձյունախառն սա-
ռույցը և մեխվեց մայթերի վրա։

Թագավորը, բուրժուաներն ու կալվածատերերը հրճվում
եյին...

Այդ որվանից բանվորները, վոր հացի փոխարեն տաք գըն-
դակներով հյուրասիրվեցին, հասկացան, վոր իրենք սիստված
են յեղել, վոր հաց և ազատությունը միայն իրենց՝ բանվորնե-
րի կազմակերպված պայքարի միջոցով կարող են ձեռք բերել։

Հունվարի 9-ի գնդակահարությունը բանվորների հեղափո-
խական շարժումն ել ավելի ուժեղացրեց։

Բանվորները ընկճվեցին ընկածների մահից և փորոշեցին
միասնական և վճռական թափով պայքար մղել «բարեբար տիրոջ»
—թագավորի, կապիտալիստների ու կալվածատերերի դեմ։

Այդպես ել արին։

Այդ որվանից հաստատուն քայլերով բանվորներն առաջ
շարժվեցին հեղափոխության մեծ գործի համար։

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Լրացավ և իրագործվեց առաջին նսգամյակը,

ՀԵԳԱՄՅԱԿ 4 ՏԱՐՈՒՄ

Ո՞վ չի լսել, ո՞վ չի կարդացել առաջին նսգամյակի մասին։

Ո՞վ չի նետել նրա հակա նվաճումներին։

Ամբողջ աշխարհի բանվորությունը, աշխատավորությունը
մի կողմից, բուրժուազիան ու նրա կողմանիցները մյուս կող-
մից՝ սրատարոփ ու աշալուրջ հետեւել են նրա ընթացքին։

Ինչու։

Վորովինետև առաջին նսգամյակի նվաճումները, առաջին
նսգամյակի իրագործումը բանվոր դասակարգի սոցիալիստա-
կան հաղթանակն ե յեղել բուրժուազիայի կործանումն ե արա-
գացրել։

Առաջին նսգամյակը ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հիմքի կա-
ռուցումն ե ապահովել։

Առաջին նսգամյակը ցույց տվեց, վոր Կարլ Մարքսի և
Վ. Լենինի ուսմունքով ընթացող կոմունիստական կուսակցու-
թյունը և բանվոր դասակարգը հաջողությամբ սոցիալիզմ են
կառուցում։

ՊԱՅՔԱՐԸ ՀԵՇՏ ԶԵՐ

Դուք գիտեք, վոր կապիտալիստական աշխարհը «ինքն
իրեն» չի մեռնի։

Սոցիալիզմն ել «ինքն իրեն» չի կառուցվի։

Առանց բանվոր դասակարգի պայքարի՝ հին կարգերի փո-
խարեն նոր կարգեր չեն ստեղծվի։

Յեվ Խորհրդային Միության բանվոր դասակարգը կոմու-
նիստական կուսակցության ղեկավարությամբ և իր դաշնակից
աշխատավոր զյուղացիության հետ միասին ուժեղ պայքար
մղեց թշնամու դեմ։

Նա թագավորի իշխանությանը վերջ տվեց։

Նա կալվածատերերին ու կապիտալիստներին քշեց, նրանց
բանակները ջարդեց։

Նա պատերազմի ու քաղաքացիական կոփների հետևան-
քով յերկրի քայլայված տնտեսությունը վերականգնեց։

Նա ընդարձակ պլանով սկսեց տնտեսությունը նոր ուժե-
րով առաջ տանել—սոցիալիզմ կառուցել։

Այդ ուղին նսգամյա պլանով գծված ուղին ե։

Մարդկության պատմության մեջ նման բան առաջին ան-
գամ կատարվեց։

Ամբողջ աշխարհի բուրժուազիան, կուլակությունը և նր-
անց կողմանիցներն ուղղում միայն ծիծաղում եյին, ծաղրում
եյին բոլշևիկներին, սակայն, յերբ տեսան, վոր ԽՍՀՄ-ի բան-
վոր դասակարգը կատակ չի անում և հաջողությամբ կատա-

բում և սպանը, սկսեցին ամեն կերպ խանգարել, վաստարարություն անել շնորհնել վոր պլանը կատարվի:

Բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և ընկեր Ստալինի առաջնորդությամբ ուժեղ պարագ մղեց, և այդ պարագը շարունակում է մղել ամեն տեսակի թշնամիների ղեմ:

Բանվոր դասակարգը վորոշեց հնգամյակը 4 տարում իրագործել և իրագործեց:

Դժվարություններ շատ կային և կան:

Դասակարգային թշնամին ծածուկ գործում եր գործարաններում, հանքատեղերում, յերկաթուղու վրա և այլուր:

Դասպարգային թշնամին - կուղակը գործում եր գյուղում, խանգարում եր կոլտնտեսականների կազմակերպմանը, փչացնում եր բերքը, կոտորում անասուններին, խանգարում եր ցան անելուն, սպանում եր ղեկավարներին ու տռաջակոր կոլտնտեսականներին:

Նրանց մնացորդներն այժմ ել հին ու նոր ձեերով շարունակում են խորհրդային իշխանության գեմ կրվել:

Թերահավատներն ու բանվոր դասակարգի դափաճաններն ոգնում են նրանց, թշնամու ջրաղացին ջուր տալիս:

Սակայն բանվոր դասակարգը հաղթեց:

Նա առաջին հնգամյա պլանը 4 տարում կատարեց, թեակոխելով յերկրորդ հնգամյակը, ԽՍՀՄ-ի աշխատավորությունն ավելի մեծ յեռանդով սկսում է 2-րդ հնգամյակի աշխատանքները կատարել:

ՄԵՐ ՆՎԱՃՌԻՄՆԵՐԸ

Առաջին հնգամյակի սկզբում ԽՍՀՄ գյուղանատեսական ինդուստրիալ յերկիր եր գերակշռում եր գյուղանատեսությունը:


Այժմ գերակշռող գերը արդյունաբերությանն է պատկանում: Յերկիրը վերածվել է ինդուստրիալ-գյուղանատեսական յերկրի:

Գյուղանատեսության մեջ արդեն վճռական գեր խաղում են խորհրդային և կոլեկտիվ անտեսությունները: Արդյունաբերությունը գյուղին տալիս է մեքենաներ, քիմիական պարագանյութեր: Գյուղանատեսությունը զարգանում է սոցիալիստական ուղղյուղ:

Մենք շատ ենք առաջ գնացել:

Մենք հակա գործարաններ ունենք արդեն:

Մեր սոցիալիստական տնտեսությունն որ-որի տճառմ է: Մենք կապիտալիստական յերկրներին համուռում ու անցնում ենք



ԽՍՀՄ-ը դառել և արդյունաբերական-գյուղանատեսական յերկիր

Առաջին հնգամյակի նվաճումները, յերկրորդ հնգամյա պլանը արար աշխարհ են զարմացնում: Աշխատավորությունն իրավացիորեն պարձենում է դրանով: Բուրգուազիան կատաղում է, փրփուր թափում:


Ահա մեր գարգացման ընթացքը.

Պ. Ա. Բ. Ա. Ջ Ա Խ Խ

- 1913 թվին արդյունահանվել է 29 միլիոն տոնն:

1917 թվին արդյունահանվել է 51 միլիոն տոնն:

1937 թվին արդյունահանվելու յե 250 միլիոն տոնն:



Ածխահատ մեխանական

Պ. Ա. Վ. Բ.

1913 թվին արդյունահանվել է 9,2 միլիոն տոնն:

1931 թվին արդյունահանվել է 22,3 միլիոն տոնն:

1937 թվին արդյունահանվելու յե 78 միլիոն տոնն:

Անցյալում մենք 3-րդ տեղն եյինք բռնում, իսկ այժմ 2-րդն ենք:

Պ. Ա. Ե Կ Տ Ո - Ե Կ Տ Ս Ր Գ Ի Ս

1913 թվին ստացվել է 1,9 միլիարդ կիլովատ ժամ:

1931 թվին ստացվել է 10,6 միլիարդ կիլովատ ժամ:

1937 թվին ստացվելու յե 100 միլիարդ կիլովատ ժամ:

1913 թվին արտադրվել է 4,2 միլիոն տոնն:

1931 թվին արտադրվել է 4,9 միլիոն տոնն:

1937 թվին արտադրվելու յե 22 միլիոն տոնն:

Թուջի (չուգունի) արտադրության
մեջ արդեն անցել ենք Բելգիայից և Անգ-
լիայից:

Մեմնաշինարարության մեջ մենք
այս 4 տարում արել ենք այնքան, վոր-
քան Գերմանիան, Հյուսիսային Ամերի-
կայի Միացիալ Նահանգները 30 տար-
վա ընթացքում:


Մենք այժմ շատ նոր ու հսկա գոր-
ծարաններ ունենք:

Մագնիտագորսկու և Կուզնեցկու
գործարանները տալու յեն թուջ ու
պողպատ:

Ստալինգրադի ու Խարկովի տրակ-
տորային գործարանները՝ տրակտոր-
ներ:

Ռոստովի Սեմաշը՝ կոմբայն, շար-
քացան, գութան, փոցի, խոտհար և
այլ գյուղատնտեսական մեքենաներ:

Կրամատորսկու գործարանը՝ բարդ
մեքենաներ արդյունաբերության համար:



Նայքի վիշտ

«Ֆրեզերը», «Կալիբրը», վորոնց նմանը չկա Յեվրոպայում,
պատրաստում են գործիքներ:

«Շարիկոպոդշիպնիկը» տալիս ե պողիպնիկներ, առանց
վորոնց մեքենաները չեն աշխատի:

Նիժեգորոդի հսկան՝ ավտոմոբիլներ:

Բալախնիյի կոմբինատը՝ թուղթ՝ գրքերի, թերթերի, տետ-
րակների համար:

Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդամյակի նախորյա-
կին սկսել ե գործել աշխարհի ամենամեծ հիդրո-ելեկտրակայանը
— Դնեպրոբերը:

Գյուղական անտեսությունների 60 տոկոսն ընդրկված ե
կոլտնտեսությունների մեջ. դաշտերի 80 տոկոսը խորհրդային
և կոլեկտիվ անտեսություններն են բռնում:

Մեր դաշտերում այժմ 100,000 տրակտորներ և տառ-
ոյակ հագարավոր բարդ մեքենաներ են աշխատում:

Մենք ունենք 2500 մեքենա-տրակտորային կայաններ, վո-
րոնք շատ մեծ դեր են խաղում գյուղում:

Մենք շատ մեծ նվաճումներ ունենք ուսման, կրթության
ասպարիզում:

ԽՍՀՄ-ում իրագործվում ե
ընդհանուր տարրական (1-4
խումբ) պարտադիր ուսումը:
Գյավալոր քաղաքներում և ար-
դյունաբերական ռայոններում
անցկացվում ե 7-ամյա պար-
տադիր ուսում: 2-րդ հնդամյա-
կում 7-ամյա ուսումը պարտա-
դիր կլինի քաղաքների և գյու-
ղերի բոլոր մանուկների և պա-
տանիների համար: Իրար հե-
տեից 7-ամյա դպրոցները վե-
րածվում են 10-ամյակների:
Յեթե միջնակարգ դպրոցներում
1931 թվին սովորում ենին
7,800,000 աշակերտներ, ապա
այժմ միջնակարգ դպրոցներում
սովորում են 25,000,000 աշա-
կերտներ:


Տեխնիկումներում ու համասպաններում յերկու միլիոն
յերիտասարդներ մանագիտություն:

Են ստանում, գառ-
նում են տեխնիկներ,
ինժեներներ, ուսու-
ցիներ, բժիշկներ,
գյուղատնտեսներ:

Հասակավորների
անգրագիտությունը
վերացել ե համարյա
և 10 տոկոս կազմող
անգրագիտների անգրագիտությունն ել մոտակա 2 տարում
որիվ կվերացվի:

Լայնանում ե մանկահամարակների, մանկապարտեզնե-
րի թիվը:

Կառուցվում են նոր թատրոններ, կինոներ, կուլտուրա-
յի տներ, ակումբներ, լուսակացներ և այլն և
այլն:



Դաման




Կոմբայն յիշ տրակտօր

անգրագիտների անգրագիտությունն ել մոտակա 2 տարում
որիվ կվերացվի:

Լայնանում ե մանկահամարակների, մանկապարտեզնե-
րի թիվը:

Կառուցվում են նոր թատրոններ, կինոներ, կուլտուրա-
յի տներ, ակումբներ, լուսակացներ և այլն և
այլն:




Անհնար և թվել այն բոլոր նվաճումները, վորոնք ձեռք են բերվել 1-ին հնգամյակում:

Դժվար ե պատմել այն մեծ ծրագրի մասին, վորոնք շ-ըդ հնգամյակումն են իրագործվելու:

Անկասկած դրանք ևս կիրագործվեն:

Մեր մեծ պլաններն իրագործվում են բանվոր զասակարգի հերոսական ջանքերով: Աշխատավորությունը շատ դժվարություններ հանձն առնելով, կովում ե պլանների իրագործման համար: Նա պայքարում ե ոպորտունիստների ու թերահավատների դեմ. նա դուրս է վտարում գործակիքներին, աշխատանքից փախչողներին և միաժամանակ ծավալում ե սոցմրցումն ու հարվածայնությունը:



Տրակտոր

Խերի ու թերահավատների դեմ. նա դուրս է վտարում գործակիքներին, աշխատանքից փախչողներին և միաժամանակ ծավալում ե սոցմրցումն ու հարվածայնությունը:

ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Խորհրդային իշխանությունը միակ իշխանությունն ե, վորմտածում ե աշխատավորության մասին. նա բնության ուժերը աշխատավորների ոգուին ե ծառայեցնում:

Շ-ըդ հնգամյակում մենք բնության ուժերն ու հարստություններն ել ավելի մեծ չափով ծառայեցնելու յենք աշխատավորների ոգուին:

Բանվոր դասակարգն ու կոլտնտեսությունները միացած ուժերով, գիտության հիման վրա, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հաջողությամբ կկատարեն այդ աշխատանքները:

Սուր պայքար մղելով դասակարգային թշնամիների դեմ, մենք կվերացնենք կապիտալիզմի մնացորդները մեր յերկրում-բանվորների սոցիալիստական հայրենիքում և կտտեղծենք անդասակարգ հասարակություն:

Դուք, խորհրդային դպրոցի աշակերտներդ, պետք ե լավ սովորեք, գիտություն ձեռք բերեք, հետևեք և հասկանաք մեր սոցիալիստական շինարարությունը և պատրաստվեք սոցիալիզմի գիտակից կառուցողներ դառնալու:

Զկան այնպիսի ամրություններ, վարսեց չկարդանան գրավել բոլեվիկները: ԽՏԱԼԻՆ

Լեռնուու յերկիր և Խորհրդային Հայաստանի Լոռու շրջանը: Նա ունի արագահոս գետեր, վորոնք ահագին ուժով թափվում են ժայռերից և անդնդախոր ու մայլ ձորերով վաղում առաջ: Այդպիսի գետերից են Դեպիեր և նրա աջ վտակը՝ Զորագետը: Լոռվա խոր ձորերն ու արագահոս գետերը հին ժամանակ սարսափի են ազգել գյուղացիների վրա: Զրերի մոնչոցը և արձագանքը նրանք յերեվակայել են վորապես քաջքերի (սատանաների) պար ու խնդություն: Դիմ-Դեպիետ անունն են տվել գյուղացիները Դեպիետ գետին:

Լոռու փրփրահոս գետերի սպիտակ ածուխը (ջուրը) չելին կարող ոգտագործել հին ժամանակ վոչ թագավորական իշխանությունը, վոչ ել դաշնակները: Նրանք չելին ցանկանում, վոր Հայաստանի բանվորն ու գյուղացին ազատվեն խավար կանքից: Աշքաբաց գյուղացին ու բանվորը վտանգավոր ելին թագավորի և դաշնակների համար:

Բայց Հայաստանի բանվորներն ու գյուղացիները տապալեցին դաշնակների լուծը: Նրանք կուսունիստական կուսակցության ղեկավարությամբ հաստատեցին խորհրդային իշխանությունը Հայաստանում: Ալդ որվանից սկսվեց Հայաստանի սոցիալիստական շինարարության բուռն վերելքը:

Ելեկտրականությունը հանդիսանում ե սոցիալիստական շինարարության գլխավոր ուժը: Դրա համար ասել ե ընկ. Լենինը, թե՝ «Կոմունիզմը—դա խորհրդային իշխանությունն ե, պյուս ելեկտրոֆիկացիա»: Խորհրդային Հայաստանի բանվորներն ու կոլտնտեսականները կուսակցության ղեկավարությամբ տարան ամենամեծ հաղթանակն առաջին հնգամյակում: Նրանք 1932 թվի նոյեմբերի 15-ին գործարկեցին Զորագետի հիղբուկեկարուկայանը: Նա կրծատ կոչվում է Զարագես: Զորագեսի ելեկտրական կայսրնի շինարարությունը սկսվել է 1928 թվի հուլիսին:

Զորագետը ունի յերեք գուրբիններ. նրանցից ամեն մեկը ունի 10,500 ձիու ուժ: Այդպիսով ամբողջ կայսնը տալիս է 31,500 ձիու ուժի համար ելեկտրականություն: Այդ ելեկտրականության 75 տոկոսն սպառելու յին Ալլահվերդու պղնձահանքերը:

Զորագեսի ելեկտրոուժի մյուս մասը գործադրվելու յե շաբաթի լիսայի հսկայական քիմիական կոմբինատում: Այս վերջինս պատրաստելու յե արհեստական քիմիական պարարտանյութեր՝ սոցիալիստական դաշտերի առատ բերքատվության համար:

Այսուհետև Զորագեսի լենինյան լամպիկները լույսեր են շաղելու կուվա գյուղերի խավար խճիթներում ու տներում: Զորագեսը վոչ միայն տրագացնում ե սոցիալիստական արդյունաբերության ու գյուղատնտեսության բոլշևիկյան վերելքը, այլև վոչնչացնում ե աշխատավոր գյուղացիության նահապետական խղճուկ ու խավար կենցաղը և հաստատում սոցիալիստական նոր կենցաղը: Ճիշտ ե գրում պրոլետարական բանաստեղծ Յեղիշե Զարենցը՝ Լոռվա մասին, թե.

«Ապրում եր գեղջուկն այստեղ իր բնում,
Վորպես անտառի վայրենի գազան,—
Ահա, բռնկված կամքով անսասան,
Նա յերկիր ե նոր իր ձեռքով շինում»:

Զորագեսի շինարարության ընթացքում հաղարավոր գյուղական յերիտասարդներ ընտելացան նոր սոցիալիստական տեխնիկային: Նրանք լինելու յեն Հայաստանի ապագա ավելի վիթխարի հիդրոկայանների՝ Քանաքեռվեսի, Սեփանի միստեմի ելեկտրակայանների շինարարության ամենափորձված կադրերը:

Զորագեսի սարքավորումը համարյա ամբողջովին պատրաստված ե խորհրդային գործարաններում:

Այդ սարքավորումն իր մեջ ունի այնպիսի նորություններ, վորոնք համաշխարհային արժեք են ներկայացնում և առաջին անգամ գործադրվում ե Զորագեսի ելեկտրակայանում: Այդպես ե, որինակ՝ զլանաձեվ փականը, վոր ջրի ճնշումից ինքնաբերաբար բարձրանում ե: Այդպես ե ճնշիչ տունելլ՝ 2,5 կիլոմետր յերկարությամբ և այլն:

Զորագեսի հաղթանակը մեծ հարված է դասակարգային թշնամիներին և ոպորտունիստներին, վորոնք բամբասում են նագամյակի ճակատում տարվող հաղթանակների մասին:

„ՄԻԿՈՅԱՆ“ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Ռուսովամ կա «Միկոյանի» անվան կոշիկի գործարան, նա 1-ին հնգամյակի անդրանիկ գործարաններից մեկն ե: Նա

աշխատավոր մասսաներին մատակարարում ե վորակեվ լավ և քանակով շատ կոշիկներ:

Այսուղեղ աշխատում են 4000-ից ավելի բանվորներ: Գործարանն ունի 10 ցեմ:

«Միկոյանի» անվան գործարանը, վոր կառուցված ե 1928 թվին, հանդիսանում ե մեր յերկրի խոշոր գործարաններից մեկը և մեծ դեր ե կատարում յերկրի սոցիալիստական շինարարության մեջ: Ամբողջ գործարանը որական արտադրում ե 20,000 զույգ կոշիկ: Կոշիկը միանգամբ չեն պատրաստում: Կոշիկի մասերը ձեռքից-ձեռք, սարքոցից-սարքոց են անցնում: Մի տեղ կաշուց պատրաստում են կոշիկի յերեսը, մյուս տեղում կարում, յերրորդ տեղում կադալարում են, ներբան և կարգում և այսպիս շարունակ, մինչև վերջնականապես պատրաստվում ե կոշիկը:

Պատրաստի կոշիկները վագոններով անցնում են պահեստ, այնուղեղ քննվում, հաշվի յեն առնվում և ապա ուղարկվում են բանվորական կենտրոններ սպասման համար: Կոշիկը լայն սպառում ունեցող ապրանքներից մեկն ե:

Գործարանը մտնելիս, թվում ե թե մեքենաները ուրախալի վողջունում են քեզ և աշխատանքի թափը վոգեկորում ե մարդուն այն աստիճան, վոր մարդ սկսում ե ակամա ժպտալ նոր մեքենաների խմբերին, վորոնք արդեն աշխատում են և կատարում իրենց ստեղծագործական աշխատանքը:

Այսուղեղ ե աշխատում նաև հարվածային բանվոր Ստեփանյան Հակոբը: Նա այն հարվածայինն ե, վորի մասին բազմից անգամ գրվել ե գործարանային պատի թերթում: Այդ նրա հարվածային բրիգան ե, վոր իր պլանը կատարեց 100 տոկոսով:


Նրա բրիգանը որինակելի յե ամբողջ գործարանում: Հարվածային բրիգաները լարված աշխատում են: Սարքոցները անդուլ գործում են առանց ըուպե անգամ կորցնելու: Զե վոր «Միկոյանի» գործարանը սոցմքցման ե կանչված Կենինգրադի «Սկորոխուղ» կոշիկ գործարանի կողմից:

Ամենքի գեմքին խաղում ե մի քաղցր ժամփակ: Հորս կողմ շարեշար կանգնած են չարաճճի աղմկող մեքենաները:

Լսվում ե զանգի ձայնը. դա նշանակում ե, վոր վերջանում ե առաջի հերթի աշխատանքը յեվ սկսվելու յե յերկրորդը: Առաջի հերթի բանվորները հեռանում են՝ տեղի տալով նորերին: Նրանց փոխարինում են նորերը, թարմ ուժերով: Գործարանում շարունակվում ե նույն աղմուկը, նույն չարաճճի

մեքենաները իրենց քաղցրահնչյուն ձայներով, միայն փոխվել են նրա դեկավար բանվորը։ Սակայն ինչ տարբերություն. ելի վագոնները ստեղծատեալ բեռնված անցնում են պահեստանոց, հետ դառնում դատարկված, նորից բեռնափորվում և այդպես շարունակ։

Նույն ժպտացող դեմքերը, այստեղ ևս հարվածայիններն են, Միայն 2-րդ բրիգադից բացակայում են Արմենակը և Պետրը. դա ևս զարմանալի չե։ Արգեն 2-րդ որն ե, ինչ նրանք չեն գալիս աշխատանքի։ Հարբում են և մնաս հասցնում պետության։ Չենց յերեկ նրանց մասին ընդհանուր ժողովում վորոշում կայացրին, վորպես սիմուլիանտների և գործաքողների դուրս շպրտել սրանց՝ զրկելով պարենավորման և արդյունաբերական ապրանքներից ոգտվելու իրավունքից։ Ի պատասխան գործաքողներին, այսոր մեծ թափով աշխատանքի յեն կպել գործարանի մյուս հարյուրավոր բանվորները, սոցիալիստական շենաբարության ներուները։



•Միկոյանի ամվաճակունիքի գործարանը Ռուսովառամ

ԴՐՈՅԱԿԱՆՆԵՐԸ ՄԵՐԿԱՑՐԻՆ ԳՐԱԵՐԻՆ ՑԵՎ ՑԵՆԹԱԿՈՒԼԱԿՆԵՐԻՆ

«Գյուղում մեր խնդիրն ե՝ վոչնչացնել կալվածատերերին, կուրել շահագործողի յեվ սպեկուլյան կուլակի ընդդիմադրությունը» (Լենին, համ. 23):

Աշակերտների աղմկալից ժողովը հետզհետե հանգստացավ յերբ դպրոցի վարիչ ընկ. կուզմենիկոն սկսեց զեկուցումը։

— Յերեխաներ, — ասում եր նա, — Վլադիմիր Իլիչն ասում եր, «վոր այն սերունդը, վորը հիմա 15 տարեկան ե, կտեսնի կոմունիստական հասարակությունը»։

Այն սերունդը, վորի մասին ասում եր Վլադիմիր Իլիչն, այդ դուք եք, յերեխաներ, ձեզ ե վիճակված ավարտելու կոմունիստական հասարակության կառուցումը, և այժմ յուրաքանչյուր պիոների, յուրաքանչյուր դպրոցականի խնդիրն ե՝ ոգնել կուսակցությանը և խորհրդային իշխանությանը սոցիալիզմի կառուցման գործում։

Յուրաքանչյուր պիոների, յուրաքանչյուր դպրոցականի խնդիրն ե, — շարունակում եր նա, — մերկացնել կուլակներին, մերկացնել ծովյերին և բոլոր նրանց, ովքեր ծախծխում և հափշտակում են կոլտնտեսային հացը։

Վարչի զեկուցումից հետո, մյուս որը դպրոցականները գտնվում եին կոլտնտեսությունում։

Յերեխաները պարզեցին, վոր առաջին բրիգադում արևածաղիկը գտնվում ե բաց յերկնքի տակ, վոր սոյան խոնավ ե և չորացված լցված ե շտեմարանը։

— Զե՞ վոր սա մնասարարություն ե, — զայրացած բացականչեց Սերգեյ Պետրուխինը։ — Տե՞րք, պետք ե ստիպել կոլտնտեսականներին հավաքել արևածաղիկը ծածկի տակ և չորացնել սոյան։

Հին պլակատների հետեւ յերեսին յերեխաները նկարեցին արևածաղիկի պլիկաներ, վորոնց վրայից հատիկները թափվում եյին արցունքի պես, իսկ բառերն արտահայտվում եյին՝

Առաջին բրիգադի կոլտնտեսականներ, բրիգադիր Յեգոր կինը մոռանում ե կարգադրություն անելու, վոր մեզ հավաքեն։ Արցունին աշխերիս խնդրում ենք կոլտնտեսականներին — հավաքեցել յեվ սարեվ մեզ № 3 դատարկ տեմարանի ծածկի տակ։

Յերեխաները պլակատները տարան բրիգադը, վորի անդամներն անմիջապես պարտավորվեցին հավաքել արևածաղիկը։

Մյուս որն արևածաղիկը կրում եյին շտեմարանը, իսկ դպրոցականները ցրում եյին սոյան չորացնելու համար փուած բրեզենդի վրա։

Չորրորդ խմբի աշակերտ՝ Պետր Մորոզովը մոտեցավ ընկերներին։

— Տղերք, — ասաց նա, — յես տեսա, թե ինչպես կուտանականներ՝ Արտյոմ Հախուալվինը և Ստեփան Մարտիրոսը լցնում եյին արևածաղիկը կոշիկների մեջ, իսկ վերշնիս կինն ամեն որ շուկայում յեգիպտացորեն և ծախում. Պետք է մերկացնել այդ գողերին:

Հետևյալ որը յերկիանները լույս ընծայեցին պատի թերթը: Այստեղ զետեղված եյին յերկու թղթակցություն այդ գողությունների մասին և այդ գողերի ծաղրանկարները:

Կոլտնտեսական Արայոմ Լախուտկինը և Ստեփան Մարտիրոսը, յեգիպտացորենը ձեռքերին՝ վազում եյին կոլտնտեսությունից տուն:

Կայացավ միտինք Թերթի մոտ հավաքվել եր կոլտնտեսականների բազմությունը, իսկ զերոհիշյալ գողերը բրիդաղի կարգադրությամբ հանում եյին իրենց կոշիկները, վորոնց միջոց թափվում եր յեգիպտացորենը:

Կոլտնտեսականները յելույթներ ունեցան միախնդում: Նրանք շնորհակալություն հայտնեցին գլարցականներին, վորոնք փրկեցին սոյան և յեգիպտացորենը փտելուց և սպնեցին կոլտնտեսականներին մերկացնելու կոլտնտեսային գույքը փրացնող յենթակուլակիներին:

Խոսեց նաև գլարցի վարիչ՝ ընկ. Կուզմենկոն.

— Յերեխաններ, դուք արդարացնում եք ձեր լենինյան անունը, դուք կատարում եք իլիչի պատգամները: Սոցիալիզմի կառուցման համար պայքարը գուք դարձրել եք ձեր կյանքի խնդիրը: Յեղեք հաստատակամ լենինյաններ, պայքարեցեք խորհրդային իշխանության թշնամինների դեմ, ավարտեցեք լենինի գործը:

ԾՆՈՒՆԴԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՆԵՐԻ ՏՈՆՆ Ե

Դեռևս մեզանում կան շատ գյուղացիներ և հետամսաց բանվորներ, վորոնք հավատում են, թե կա աստված, հաճախում են յեկեղեցի, կատարում են յեկեղեցական տոններ:

Սոցիալիզմի կառուցման հետ այդպիսինների թիվը քանի գնում արագորեն պակասում եւ Բայց կրոնը սոցիալիզմին բացակ մնասում եւ Յեկեղեցականները թե մեզանում, թե բոլոր յերկրներում կապիտալիզմի դաշնակիցներն են, պրոլե-

տարիատի թշնամին: Մենք պետք եւ ուժեղացնենք պահպանը դրանց դեմ, վորպեսզի յերկրորդ հնգամյակը նույն և ավելի հաջողությամբ կատարենք, ինչպես և առաջինը կատարեցինք:

Բայց կրոնի և տերտերի, մոլլանների ու նրանց ամենն տեսակի գործակիցների դեմ պայքարն ուժեղացնելու համար մենք պետք լավ գիտենանք, թե ինչ ձեվերով են նրանք խաբում աշխատավորությանը, ինչ ձեվերով են վասում սոցշինարարության գործին: Դիտենանք, վորպեսզի հաջողությամբ բացենք նրանց խարեբայություններն ու վասարար դերը:

2. ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋ ՅԵԿԵԼ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆՆ

Քրիստոնեական և այլ կրոնների բոլոր տոններն առաջ են յեկել իին ժամանակներում: Այդ տոնները զանազան յերկրներում հեռավոր անցյալում կապված են յեղել յերկրագործական ժողովուրդների անտեսության հետ: Որինակ, Զատիկը հացահատիկների ծլելու և աճման տոն եր, աստվածածինը պատուղների ժողովման տոննը:

Հնում յերկրագործ ժողովուրդները պաշտում եյին արևը:

Յերկրագործ ժողովուրդների տնտեսության համար արել մեծ նշանակություն ուներ: Յերբ տեխնիկան թույլ եր, տնտեսությունը տարբեր մեր պրեմիտիվ (պարզ) ձեվերով, արելց եր մեծ չափով կախված բերքը: արեգակը կարող եր յերաշտ անել, չորացնել ցանքը: ուշ գարունը, շուտ վրա համնող ցըրտերը աշնան՝ մեծ չափով կարող եյին վասել հացաբույսերն ու ծառապտուղները:

Այդ եր պատճառը, վոր հնում կիսավայրենի ժողովուրդները աստվածացնում եյին արեվը, պաշտում նրան, նրանք ամեն տեսակի ծիսակատարություններով կարծում եյին, թե կարող են աղեկ արևի վրա, վոր լավ յեղանակ լինի, բերքը չփշանա:

Ծննդյան տոնը բոլոր յերկրներում կատարվում է զեկումբերի վերջին կամ հոմնվարի սկզբին:

Բոլոր կռապաշտական աստվածների ծնունդը հնում տոնում եյին դեկտեմբերի 25-ին: ինչպես պարսկական Միթրաաստծու, հունական Ապոլլոնի, հոռմետական Կայսրության Ատամի, Ադրոնիսի, Դեռոնիսի:

Հետագայում Քրիստոսի ծննդյան տոնն ել այդ ժամանակ են սկսել տոնել:

Բոլոր այդ աստվածների պաշտամունքն ել կապված եր արևի հետ:

Դա արեւադարձի տոնն էր. չե վոր դեկտեմբերի վերջին արեց գառնում ե դեպի հյուսիս, մոտենում ե գարունը. մոտենում ե ընության կենդանացումը, բույսերի աճումը:

Քրիստոսի ծննդյան տոնն ել արեվադարձային տոնն է յեղեւ:

Քրիստոսը չի ծնվել, Գիտությունը ցույց ե տվել, վոր Քրիստոսն առնասարակ գոյություն չի ունեցել, ել ինչպես կարող եր նա ծնվել:

Քրիստոնեական կրոնը ձեվակերպվել է մոտ 1600—1700 տարի սրանից առաջ հոռմեական պետության մեջ: Նրա մեջ կան հին կուապաշտական կրոնների մասցորդները: Քրիստոսի ծննդյան հեքյաթները կուապաշտական արեվի ծննդյան, արեւադարձի տոնն եւ:

3. Ո՞ԻՄ ՀԱՄԱՐ ԵՆ ՊԵՏՔ ԿՐՈՆԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ

Սակայն ծննդյան տոնը, ինչպես և կրոնական բոլոր տոները շահագործող բոլոր դասակարգերը հարմարացրել են իրենց շահերին, ոգտագործել են՝ աշխատավոր մասսաներին ճշնշելու, շահագործելու:



ՇՅԱՄՈՒ ՏՈՆԵՐԸ

Ցերք միլիոնավոր բանվորներ կապիտալիստական յերկրներում տիրող շահագործող կարգերի շնորհիվ գործազուրկ են, կարոտ մի կտոր հացի, միլիոնույն ժամանակ կապիտալիստների հսկայական պահեստներում փառում են ամեն տեսակի ապրանքներն ու մթերքները:

Նրա դիմաց կապիտալիստների դաշնակից յեկեղեցական-ները քարոզում են բանվորներին ու գյուղացիներին համբերող լինել, աղոթել ու աստծուն հավատալ և կապիտալիստի ունեցածին աչք չդնել:

Զմեռ ե, սաւնամանիք, հաղարավոր գործազուրկներ Գերմանիայում, Անդիւխյում, Ամերիկայում, բոլոր յերկրներում բացությա, սոված, նրանց յերեխաները սովում են, սառում: Այդ

միլիոնույն ժամանակ Բերլինի, Լոնդոնի, Փարիզի ու Նյու-Յոր-կի շքեղ հյուրանոցներում ու ակումբներում կապիտալիստները Քրիստոսի ծննդյան տոնն են կատարում, ամեն տեսակի բարիքներ վայելում ու մտածում, թե ինչպես ճնշեն բանվորների հեղափոխական շարժումները, կամ թե ինչպես պատրաստվել Խորհրդային Միության վրա հարձակվելու:

Իսկ այդ ժամանակ տերտերները քարոզում են բանվորներին ու գյուղացիներին աղոթել, համբերել, պայքար չմղել կապիտալիստների դեմ: Չե վոր Քրիստոսը պատվիրել ե միշտ հնագանդվել յեղած կարգերին, —ասում են նրանք:

Սակայն բանվորներն ու գյուղացիները կապիտալիստական յերկրներում արդեն դիտակցում են իրենց շահերը: Նրանք համախմբվելով կոմունիստական կուսակցությունների շարքերը, լենինյան դրոշի տակ՝ կազմակերպված պայքար են մղում կապիտալիստական կարգերի ու խաբերա կրոնավորների դեմ:

Բոլոր յերկրների բանվորներն արգեն հասկանում են, վոր յեղած շահագործական կարգերը կարելի յե վերցնել հեղափոխական պայքարի միջոցով: Նույն ուղիով, ինչ ուղիով կյանքը փոխեցին Խորհրդային Միության բանվորները:

Նրանք շատ լավ հասկանում են, վոր ծննդյան, զատկի և այլ տոները միայն կապիտալիստներին են պետք, ինչպես և տերտերներին՝ աշխատավորությանը խաբելու, խավարի մեջ պահելու, շահագործումն ուժեղացնելու համար:

Տամյակ հազարավոր բանվորներ Գերմանիայում և այլ կապիտալիստական յերկրներում կտրում են իրենց կապերը յեկեղեցու հետ: Նրանք մանում են իրենց անաստված կազմակերպություններն ու ակտիվ կերպով պայքարում են կրոնի ու յեկեղեցականների դեմ: Պայքարում են կապիտալիստական կարգերի դեմ:

4. ԿՐՈՆԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԵՆ ՍՈՑԵՒԱՐԱՐՈՒԹՅԱՆ Բ

Խորհրդային Միության բանվորներն ու գյուղացիները կոմկուսակցության ղեկավարությամբ կառուցում են մեր յերկրում անդասակարգ սոցիալիստական հասարակարգ:

Մենք թևակոխում ենք յերկրորդ հսկամյակը. կազմակերպում ենք պայքարը պլանները կատարելու, արտադրության բացությա, սովություններն ամրապնդելու, բերքը բարձրացնելու:

Այդ բոլորը հնարավոր և միայն լավ կազմակերպված աշխատանք կատարելով, պարապությունը, հարբեցողությունը, ծուռփյունը վերացնելով:

Իսկ կրոնական տոնները:

Դրանք մեր շինարարության վաս են հասցնում:

Հետամնաց բանվորներն աշխատանքի չեն դուրս գալիս, պարապում են ծննդյան և այլ տոններին հարբեցողությամբ, քում են արտադրությունը: Հարբած աշխատանքի յեն գնում ու կոտրում թանգարժեք մեքենաները, ճեղքվածքներ առաջ բերում:

Նույն են անում և հետամնաց կոլտնտեսականները: Նրանք փոխանակ ուժեղացնելու հացամթերումը, պատրաստվելու գարնանացանին, ամրացնելու կոլտնտեսությունը, գործիք են դառնում կուլակներին, տերտերներին ու թուլացնում, քայլայում են կոլտնտեսությունը:

Ծննդյան տոններից ոգտվում են տերտերները, վորոնք աշխատում են «առատ հունձ անել այդ որերին»:



Ծննդյան տոններն ոգտագործում են կուլակները՝ կոլտնտեսությունները՝ թուլացնելու ու քայլայելու համար:

Ծննդյան տոններն ոգտագործում են վնասարարներն ու մեր ամեն տեսակի դասակարգային թշնամիները՝ սոցշինարարության տեմպերը թուլացնելու, հին կարգերը վերականգնելու Պետք ե ուժեղացնենք պայքարը կրոնի դեմ:

Ծննդյան տոններին ավելի ուժեղ աշխատանքով պետք է ոժանդակել պլանների կատարման:

Ծննդյան յերեկոները բոլոր պիոներներն ու աշակերտներն իրենց ծնողներին պետք ե տեսնեն ակումբներում կամ խրճիթ-ընթերցարաններում կազմակերպված յերեկոյի թշներում:

ՍԵԽԱՌԱՆՔ

1. Այս հոդվածն ընթերցեցեք տանը մեծերին,
2. Մեծերի հետ սոցմշաման պայման կապեցեք՝ ծննդյան տոնները լավագույն ձեզով անցկացնելու (դուրս գալ աշխա-

տանքի, պարապուրդ չունենալ, հարբեցողություն չանել ակմբում, դյուղում խրճիթ ընթերցարանում ծննդյան յերեկոն անցկացնել և ուրիշ:

3. Կազմակերպեցեք բրիգադ և ուսուցչի ոգնությամբ պարզեցեք, թե վորքան ե մոտավորապես ձեր գյուղը ծախսում ծննդյան տոններին:

ՊԱՅՏԱՐԸ ԿՐՈՆԻ ԴԵՄ՝

ՊԱՅՏԱՐ Ե ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ

ՊԱՅՏԱՐԵՆՔ ՈՒՍՄԱՆ ԲԱՐՁՐ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ

Մեր այս ուստարվա յերկրորդ կիսամյակը մենք ոկտում ենք յերկրորդ հնգամյակի առաջին տարում:

Ուստարվա անցյալ կիսամյակում մենք շատ բացեր ունեցանք: Մենք դեռ չգիտենք լավ պայքարել ուսման բարձր վորակի և կոմունիստական դաստիարակության համար: Շատ հաճախ մեր թերություններն առիթ են տալիս կուլակներին և հականեղափականներին վատարանել մեր դպրոցը, մեր ուսուցումը և իսանգարել մեր գործը:

Կուրքանի կուլակներն, որինակի, քարոզում եյին կոլտնտեսականներին, թթ հարկավոր չե յերեխաններին դպրոց ուղարկել, և դրա հետևանքով հաճախման տոկոսը շատ իջել եր: Մի ուրիշ որինակ—Չեչնիայի մարզում մոլլաները գաղտնի դպրոց են պարզմակերպում ու յերեխաններին կրօն սովորեցնում: Ահա այդ պիսի միջոցներով կուլակն ու մոլլան, հականեղափականն ու տերտերը—աշխատում են վնասել մեր դպրոցական գործը:

Մենք պետք ե վոչ միայն պայքարենք մեր մանր բացերը վերացնելու համար, այլ նաև ջախջախենք մեր դպրոցական գործի ամեն տեսակի թշնամիններին:

Առաջին կիսամյակում մենք չկարողացանք հարկավոր չափով բարձրացնել ուսման վորակը, հաճախումը, կարգապահությունը: Մենք չկարողացանք և լավ կազմակերպել ինչպես դպրոցական, այնպես ել արտադպրոցական հասարակական ոգտակար աշխատանքը, աշխատանքը բանվորական սենյակում, հոգամասում, կոլտնտեսության և ծնողների մեջ:

Մեզ հարկավոր ե աչքի առաջ ունենալ այդ բացերը ու աշխատել տարվա յերկրորդ կիսում վերացնել նրանք:

ՍՈՎԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԵԼ

Մենք գեր լավ աշխատել չգիտենք: Չգիտենք կազմակերպել տան ու դպրոցի աշխատանքն այսպես, ինչպես հրահանգվում ե մեզ ներքին կարգապահությամբ: Պետք ե սովորել աշխատել: Նախ պետք ե աշխատանքի որը մասերի բաժանել, այսպես, դասերին պատրաստվելու, դպրոց գնալու, տնային աշխատանքի և հասարակական բեռնավորման, իսպի համար:

Դպրոցից վերադառնալիս պետք ե մյուս որվա դասերին պատրաստվել ու դպրոց գնալիս ստուգել, թե նույն որվա գիրքն ու տետրակը վերցրել ե հետո:

Ամեն մի աշակերտ պետք ե իր տետրակներից մեկում ունենա դասաժամերն ու դասացուցակը:

Պետք ե աշխատել վոր ամեն մի աշակերտ դպրոցում միայն մի հասարակական աշխատանք ունենա:

Մեր բացերից ե և վատ հաճախումը—իսկ վրա դեմ լավ կուիլու համար, պետք ե աշակերտների ցուցակը գունավոր և մեծ-մեծ տառերով փակցվի դասարանի պատին. բացակայությունը միշտ պետք ե նշանակվի ու բոլորն իմանան, թե ով, վոր որը չի յեկել, պետք ե նաև անհարգելի պատճառով չհաճախողի հարցը դասկոմի, աշխորհի և պատի-թերթի նյութ դարձնել և այլու:

Դասարանի պատին պետք ե փակցը լինի և ներքին կարգապահությունը, սոց-պայմանագիրը, դասացուցակն ու դասաժամերը:

ԲԱՐՁՐԱՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԻ

Մեր շատ աշխատանքները հաճախ բոլորովին վորակ չունեն: Ժամեր մենք շատ ենք ծախսում զերելու, կարդալու կամ դասը լսելու համար, բայց աշխատանքների արդյունքը դեռ անբավար ե: Վեցցնենք մեր տետրակներն ու գրավոր աշխատանքները. Նրանց մեջ նախադասությունների, ուղղագրության ահազին սխաներ կան: Չմոռանանք նաև մեր տետրակների աբտաքինը: Շատ թերթեր կեղուու, խծրծած, զրած, ջնջրած, կիսապատոած, թերթահան են: Մենք դեռ չգիտենք տետրակը մակագրել (ումն ե, ինչի համար ե), եջագրել և աշխատանքը թվագրել:

